

Գ ն մ ան ը ն դ հ ան ու ը ր ծ ան ու լ ց ու մ

Երկիր/Վայր՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան

Ծրագիր՝ Երևանի Էներգաարդյունավետության 2-րդ ծրագիր

Ֆինանսավորման հնարավոր աղբյուր՝ Եվրոպական ներդրումային բանկ և Եվրոպական միության ֆինանսական գործիք հանդիսացող Հարևանության ներդրումային հարթակ

Գ ն մ ան տե ս ակ՝ աշխատանքներ և ծառայություններ

Հրապարակման ամսաթիվ՝ 2023 թվական, Մայիսի 5

ՀՀ Կառավարությունը դիմել է Եվրոպական ներդրումային բանկին և Եվրոպական միության ֆինանսական գործիք հանդիսացող Հարևանության ներդրումային հարթակին՝ Երևանի Էներգաարդյունավետության 2-րդ ծրագրի իրականացման համար ֆինանսավորում ստանալու համար և, եթե ֆինանսավորումը հաստատվի՝ մտադիր է վարկի և դրամաշնորհի հասույթի մի մասն ուղղել սույն ծրագրի շրջանակներում ձեռքբերվելիք աշխատանքներին և խորհրդատվական ծառայություններին համար: Ծրագիրը կիրականացվի Երևանի քաղաքապետարանի կողմից:

Ծրագիրն իր մեջ կներառի հետևյալ բաղադրիչները.

- (i) Երևան քաղաքում գտնվող մանկապարտեզների արդիականացում, Էներգաարդյունավետության բարելավում և վերականգնում;
- (ii) Երևան քաղաքում գտնվող պոլիկլինիկաների արդիականացում, Էներգաարդյունավետության բարելավում և վերականգնում;
- (iii) ինժեներական և տեխնիկական հսկողություն ծառայություններ մատուցում;
- (iv) պոլիկլինիկաների նախագծման և հեղինակային հսկողություն ծառայություններ մատուցում:

Բանկի ֆինանսավորման ապահովման դեպքում, վարկի և դրամաշնորհի միջոցներով ֆինանսավորվող պայմանագրերը կառաջնորդվեն Եվրոպական ներդրումային բանկի գնումներին

ն Լ ղ Ե ց ո Լ Ե ր ի ց ի պահանջներին համապատասխան :
Վարկի և դրամաշնորհի միջոցները չեն
օգտագործվի անձանց կամ
կազմակերպություններին որևէ վճարման կամ
ապրանքների ներմուծման նպատակով, եթե նման
վճարումը կամ ներմուծումը արգելվում է ՄԱԿ-ի
Անվտանգության խորհրդի որոշմամբ,
Միավորված ազգերի կազմակերպության
կանոնադրության 7-րդ գլխի և Պատվիրատու
երկրների պաշտոնական կարգավորման մասին
օրենքի համաձայն :

Վարկի և դրամաշնորհի միջոցներից
ֆինանսավորվող մրցույթները բաց են ցանկացած
երկրի ընկերությունների համար :

Վերոնշյալ պայմանագրի/երի համար
մրցույթները նախատեսվում է մեկնարկել 2023
թվականի 2-րդ եռամսյակում :

Միջազգային բաց մրցակցային գնումների
ենթակա պայմանագրերի հատուկ գնումների
ծանուցումները հասանելի դառնալու նպես
կհրապարակվեն Եվրոպական միության
պաշտոնական ամսագրում (OJEU), SUDIP Երևանի և
Երևանի քաղաքապետարանի պաշտոնական
կայքերում և «Հայաստանի Հանրապետություն»
թերթում :

Հետաքրքրված հայտատուները,
կապալ առուները և խորհրդատուները կարող են
դիմել .

Կոնտակտային անձ` պարոն Տիգրան Բեգլարյան,
Գնումների մասնագետ

Գնումներն իրականացնող կազմակերպություն`
«Երևանի կառուցապատման ներդրումային
ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ,
Երևանի քաղաքապետարան

Հասցե` Բ. Երևան, Բուզանդ փողոց 1/3, 5-րդ հարկ, 508
սենյակ

Հեռախոսահամար` +374 10 52 09 73

Էլ Ե կ տր ո ն ա յ ի ն հ ա ս ց Ե` ipiu@yerevan.am և tigran.beglaryan@yerevan.am